ՄԱՆԿԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ
АРМЯНСКАЯ АССОЦИАЦИЯ ДЕТСКИХ ВРАЧЕЙ
**ARMENIAN PEDIATRIC ASSOCIATION**

Mamikonyants 30, Yerevan 0014, Armenia
Tel. +374 10 236030; Fax: +374 10 284170
E-mail: armpa@yandex.com

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ 6-րդ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ**

**(միջազգային մասնակցությամբ)**

**Հոկտեմբերի 12-13, 2018 թ., ք.Երևան**

## Տեղեկատվական նամակ

**Առողջապահական հաստատությունների ղեկավարների, մանկաբույժների, ընտանեկան բժիշկների, մանկական վիրաբույժների և այլ մասնագետների, առողջապահության կազմակերպիչների համար**

Հարգելի գործընկերներ,

Սիրով հրավիրում ենք Ձեզ մասնակցելու երեխաների և դեռահասների առողջության արդիական խնդիրներին նվիրված Մանկական բժիշկների ազգային 6-րդ կոնֆերանսի աշխատանքներին, որն անցկացվելու է ս./թ. հոկտեմբերի 12-13-ին Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի դահլիճում:

Կոնֆերանսի ծրագրում ընդգրկելու են ընդհանուր մանկաբուժության, մանկական գաստրոէնտերոլոգիայի, սննդաբանության և մի շարք այլ ուղղություններ: Նախատեսվում են Շվեյցարիայից, Ավստրիայից, Գերմանիայից, ՌԴ-ից հրավիրված ճանաչված մասնագետների դասախոսություններ, կներկայացվեն և կքննարկվեն ուշագրավ կլինիկական դեպքեր և բժշկական սխալներ:

Կոնֆերանսի աշխատանքային լեզուներն են՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն:

Կոնֆերանսի գիտական ծրագիրը ներկայացվելու է ՀՀ ԱՆ Հավաստագրման կենտրոն, և բոլոր նիստերին մասնակցած բժիշկներին կտրվեն համապատասխան ՇՄԶ կրեդիտներով վկայականներ:

Կոնֆերանսին մասնակցելու համար անհրաժեշտ է նախապես գրանցվել՝ armpa@yandex.com էլ. փոստով:

Հարգանքով՝
Ասոցիացիայի նախագահ
պրոֆեսոր Աշոտ Սարգսյան

## Կոնֆերանսի կազմկոմիտե

Պրոֆ. Ա.Ա.Սարգսյան՝ Կոնֆերանսի նախագահ, ՄԲՀԱ նախագահ

Դոց.Ս.Գ.Սարգսյան՝ ՄԲՀԱ փոխնախագահ

Դոց.Ն.Հ.Դալլաքյան՝ ՄԲՀԱ փոխնախագահ

Պրոֆ. Ն.Գ.Բաղդասարյան՝ ՄԲՀԱ փոխնախագահ

Պրոֆ. Կ.Հ.Սիմոնյան

Պրոֆ. Գ.Գ.Ամարյան

Ա.Վ.Խաչատրյան

Դոց.Լ.Ռ.Սիմոնյանց

Ե.Ա.Մովսեսյան՝ ՄԲՀԱ տնօրեն

Ն.Ա.Արիկյանց

Քարտուղարություն՝

Ն.Շահվերդյան, Մ.Մելքումովա, Ս. Հարությունյան:

## Գիտական կոմիտե

Պրոֆ. Ա.Ա.Սարգսյան

Դոց. Ն.Հ.Դալլաքյան

Պրոֆ. Ն.Գ.Բաղդասարյան

Պրոֆ. Կ.Հ.Սիմոնյան

Պրոֆ. Գ.Գ.Ամարյան

Դոց. Ս.Գ.Սարգսյան

Պրոֆ.Ա.Մ.Համբարձումյան

Դոց. Ա.Վ. Հակոբյան

Բ.Գ.Սուխուդյան

Պ.Ա. Մազմանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ **6**-րդ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ

**(միջազգային մասնակցությամբ)**

**Հոկտեմբերի 12-13, 2018 թ., ք.Երևան**

Երևանի Մ.Հերացու անվան Պետական բժշկական համալսարան

## <u>Կլինիկական դեպքերի ներկայացման պահանջները</u>

Կլինիկական դեպքերը ներկայացվում են Կոնֆերանսի գիտական կոմիտե՝ հետագա քննության և կոնֆերանսի ծրագրում ընդգրկվելու նպատակով:

Դեպքի նկարագրությունը պետք է լինի ավարտուն, ընդգրկի հիվանդության պատմությունը, ախտորոշման և վարման գործընթացը, բուժման ելքը: Դեպքերը պետք է անդրադառնան նաև բժշկական սխալների վերլուծությանը և քաղած դասերին: Ներկայացված դեպքը կքննվի գիտական կոմիտեի կողմից և կտրվի եզրակցություն կոնֆերանսին ներկայացնելու վերաբերյալ:

Դեպքը ներկայացնել հայերեն լեզվով, Microsoft Word տեքստային խմբագրիչով (.doc կամ .docx): **Ծավալը՝ մինչև 1 էջ**, տառատեսակը՝ Unicode (Sylfaen):

Դեպքերը ներկայացնել համապատասխան **վերնագրով**, **բուժհաստատության և հեղինակի մասին տվյալներով** (լրացնել ստորև նշված կոնտակտային տվյալները)՝

Անուն Ազգանուն Հայրանուն _______________________________________________

Հաստատություն___________________________________________________________

Հեռախոս ______________ Էլ.փոստ _______________

Ըստ պահանջված կարգի ձևակերպված դեպքերի նկարագրությունն ուղարկել կազմկոմիտե՝ armpa@yandex.com էլ. փոստով, <u>**մինչև օգոստոսի 31–ը**</u>:

Հանձնաժողովի կողմից ընտրված կլինիկական դեպքերը կներկայացվեն Կոնֆերանսի համապատասխան գիտական նիստին 10-15 րոպեանոց ներկայացման-զեկույցի ձևով:

Լրացուցիչ հարցերի դեպքում դիմել կոնֆերանսի քարտողարություն կամ Ասոցիացիայի գրասենյակ՝ 010 23 60 30, 093 884800, 098215959 հեռախոսահամարներով (կոնտակտային անձինք՝ Ն.Շահվերդյան, Ե.Մովսեսյան, Մ.Մելքումովա):

*Կազմկոմիտե*